Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՂԱԲԱԲՅԱՆ ԿԱՐԻՆԵ ՀԱԿՈԲԻ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԼԵԶՎԱԶԳԱՑՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲՈՒՀՈՒՄ

ԺԳ.00. 02 - «Դաստիարակության և դասավանդման մեթոդիկա (հայոց լեզու)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ե Ր Ե Վ Ա Ն 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների թեկնածու Ս.Տ. Վարդումյան
Գիտական խորհրդատու՝	փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ. Զ. Ջիջյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկվարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ի. Կ. Կարապետյան
	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Վ. Գալստյան
Առաջատար կազմակերպություն՝	Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2018թ. ապրիլի 25-ին՝ ժամը 12^{00}–ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 23.03.2018թ.

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, մանկ.գիտ. թեկնածու, դոցենտ՝ Ա.Հ.Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը:

Համայն աշխարհում 20-րդ դարավերջից սկսած տեղի են ունենում կրթական բարեփոխումներ՝ պայմանավորված ինչպես արդի, այնպես էլ ապագա հասարակության կողմից առաջադրվող պահանջներով: Ժամանակակից հասարակությանն անհրաժեշտ են ճկուն մտածողություն ունեցող և ստեղծագործաբար գործող, ինքնակատարելագործման ձգտող, փոփոխվող պայմաններում արագ կողմնորոշվող, բազմակողմանի զարգացած մասնագետներ: Այս հանգամանքը կրթական համակարգի առջև դնում է մի շարք կարևորագույն խնդիրների առաջնահերթ լուծում՝ գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերելու, դրանք գործնականում կիրառելու կարողությունների զարգացում, սովորողների լեզվական, տրամաբանական, ստեղծագործական, քննադատական, վերլուծական մտածողության, լեզվազգացողության ձևավորում և մակարդակի բարձրացում: Նշված խնդիրների լուծումը ենթադրում է համալիր բարեփոխումների իրականացում հանրակրթության և բուհական համակարգերում: Բարեփոխումների շրջանակներում, բնականաբար, կենտրոնական տեղ են զբաղեցնում ուսուցիչների մասնագիտական վերապատրաստումը և ժամանակի պահանջներին համահունչ բարձրամակարդակ ուսուցիչների նոր սերնդի պատրաստումը: Այդ տեսանկյունից կարևոր է ապագա ուսուցչի լեզվահաղորդակցական կոմպետենցիայի զարգացումը, նրա կողմից լեզուների յուրացման լեզվաբանական, մանկավարժական, հոգեբանական հայեցակետերի ուսումնասիրումը, լեզվազգացողության մակարդակի բարձրացումը (Յու.Դ. Ապրեսյան, Մ.Մ. Գոիլերներ, Գ.Վ. Էյգեր, Ի.Տ. Վասիլևա, Ա.Ս. Բուգա, Լ.Ի. Բոժովիչ, Ե.Դ. Բոժովիչ, Լ.Ս. Վիգոտսկի, Դ.Ս. Պալերմո, Ե.Մ. Վերեշչագին, Ա.Ե. Տեր-Գրիգորյան, Ս.Գ. Աբրահամյան, Ջ.Հ. Գյուլամիրյան, Էդ. Ջրբաշյան, Լ.Մ. Խաչատրյան):

Լեզվազգացողության էությունը, դրսևորման առանձնահատկությունները, գործառույթներն առավել հետևողականորեն սկսել են ուսումնասիրվել 20-րդ դարասկզբից (Լ.Ի Բոժովիչ, Մ.Մ. Գոլիերներ, Գ.Վ. Էյգեր, Ֆ. Կայնց և այլք) և այսօր էլ մնում են հետազոտողների ուշադրության կենտրոնում (Ե.Դ. Բոժովիչ, Ե.Ի. Գորոշկո, Վ.Ա. Դոլինսկի, Դ.Բ. Էլկոնին, Օ.Ա. Լեբեդևա, Ի.Տ. Վասիլևա, Ե.Մ. Վերեշչագին): Հայ իրականության մեջ լեզվաբանները, մեթոդիստ-մանկավարժները, հոգեբանները, փիլիսոփաները (Ս.Գ. Աբրահամյան, Յու.Դ. Ապրեսյան, Գ.Ա. Բրուտյան, Ջ.Հ. Գյուլամիրյան, Ռ.Զ. Ջիջյան, Էդ. Ջրբաշյան, Ա.Ե. Տեր-Գրիգորյան, Լ.Մ. Խաչատրյան,) գիտակցելով և ընդգծելով լեզվազգացողության զարգացման կարևորությունը, իրենց հետաքրքրությունների շրջանակներում, թեկուզ և թռուցիկ, անդրադարձել են այս խնդրին, սակայն համալիր հետազոտություններ այդ ուղղությամբ ցայսօր չեն կատարվել:

Մեր ատենախոսությունը նվիրված է սովորողների լեզվազգացողության համալիր ուսումնասիրմանը և դրա զարգացման մեթոդական համալիրի մշակմանը:

Հետազոտության նպատակն է մշակել և ուսուցման գործընթացում ներդնել տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակի

շարունակական բարձրացմանն ուղղված մեթոդական համալիր, որը կխթանի ապագա ուսուցչի հաղորդակցական կոմպետենցիաների զարգացումը:

Հետազոտության օբյեկտը տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողությունն է:

Հետազոտության առարկան տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության զարգացման մեթոդական համալիրն է:

Հետազոտության աշխատանքային վարկածը:

Մեր կողմից մշակված մեթոդական համալիրի կիրառումը կնպաստի ապագա դասվարների լեզվազգացողության մակարդակի բարձրացմանը, եթե մայրենիի բուհական դասընթացում ներառվեն տարրական դպրոցի մայրենիի առարկայական չափորոշիչներով ու ծրագրերով նախատեսված բովանդակությունն ու սովորողների գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները:

Հետազոտության խնդիրներն են:

1. Վերլուծել հայրենական և արտասահմանյան գիտամեթոդական գրականության մեջ ներկայացված լեզվազգացողության տեսական հիմքերը և բացահայտել այն հիմնական դրսևորումներն ու զարգացման մեխանիզմները, որոնք կարող են կիրառելի լինել ուսուցման գործընթացում:
2. Մշակել և փորձարկել տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակը որոշելու եղանակ՝ կիրառելով բառային զուգորդությունների գիտափորձի (ԲԶԳ) մեթոդը:
3. Մշակել և փորձարկել տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության զարգացմանն ու ձևավորմանն ուղղված մեթոդական համալիր:
4. Կիրառել մշակված մեթոդական համալիրն ապագա դասվարների մանկավարժական պրակտիկայի ընթացքում՝ հիմք ընդունելով տարրական դպրոցի մայրենիի առարկայական չափորոշիչները և ուսումնական ծրագրերը:
5. Ամփոփել բառային զուգորդությունների փորձարարական ուսումնասիրությունների արդյունքները, մշակել հետագա աշխատանքի գիտատեսական հիմքերը, ձևավորել մեթոդական երաշխավորություններ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերն են անձի լեզվամտածողության, լեզվազգացողության, լեզվական-հաղորդակցական կոմպետենցիաների ձևավոր-ման ու զարգացման լեզվաբանական, հոգելեզվաբանական, մանկավարժամեթո-դական, հոգեբանական, փիլիսոփայական գաղափարները, հայեցակարգերն ու տեսությունները: Ատենախոսության հիմնախնդրի շրջանակներում կատարված հետազոտության համար էական նշանակություն են ունեցել Յու.Դ. Ապրեսյանի, Ե.Դ. Բոժովիչի, Ա.Ս. Բուգայի, Մ.Մ. Գոհլերների, Ի.Տ. Վասիլևայի ուսումնասիրությունները, դրանցում առաջադրված գաղափարները, տեսակետներն ու դրույթները:

Ստացված փորձարարական տվյալները մշակվել են՝ հիմք ընդունելով Պ. Անդերսենի, Ա.Ա. Լեոնտևի, Ջ. Մորգանի աշխատանքներում ներկայացված դասակարգման ու վերլուծության եղանակները:

Հետազոտության մեթոդները: Առաջադիր խնդիրների լուծման համար կիրառվել են հետևյալ մեթոդները՝

1. **տեսական**. լեզվաբանական, հոգելեզվաբանական, հոգեբանամանկավարժական

և լեզվադիդակտիկական մեթոդական գրականության, ինչպես նաև բառային զուգորդությունների տեսության ուսումնասիրության և վերլուծության հենքի վրա մշակվել է մանկավարժական բուհերի ուսանողների լեզվազգացողության շարունակական զարգացման մեթոդների համալիր:

2. **էմպիրիկ՝**
   - **դիտում**. թեմայի ուսումնասիրման նպատակով անհրաժեշտ տվյալների և փաստերի հավաքագրում,
   - **զրույց, բանավեճ** ուսանողների, աշակերտների, ուսուցիչների հետ, սովորողների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքների վերլուծություն ու գնահատում,
   - **թեստավորում**. բացահայտվել են գիտափորձին մասնակից սովորողների տարիքային, հոգեբանական ու հաղորդակցական առանձնահատկությունները, հստակեցվել են գիտափորձի անցկացման պայմանները և արդյունքների վերլուծման մեթոդաբանությունը,
   - **փորձարկում,** որի արդյունքում գործնականում բացահայտվել է սովորողների լեզվազգացողության զարգացմանն ուղղված՝ մեր կողմից մշակված համալիր մեթոդների արդյունավետությունը:
3. **վիճակագրական.** *Mathematica* և *Origin* ծրագրային փաթեթների կիրառմամբ մաթեմատիկական վիճակագրության մեթոդներով իրականացվել է փորձարարական տվյալների քանակական վերլուծություն՝ ապահովելով ստացված արդյունքների հավաստիությունը:

Հետազոտության գիտական նորույթը:

- Հայ իրականության մեջ առաջին անգամ կիրառվել է ԲԶԳ մեթոդը՝ որպես ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակի չափման միջոց:
- Մշակվել, փորձարկվել և մանկավարժական գործընթացում ներդրվել է սովորողների լեզվազգացողության մակարդակի աստիճանական բարձրացումն ապահովող մեթոդական համալիր, որը հավասարապես կիրառելի է ինչպես բուհերում, այնպես էլ հանրակրթությունում իրականացվող ուսուցման գործընթացներում:
- Մշակված մեթոդական համալիրը փորձարկվել է տարրական դասարաններում՝ մակավարժական համալսարանի ուսանողների անմիջական մասնակցությամբ՝ մանկավարժական պրակտիկայի ընթացքում, ինչը թույլ տվեց գործնականում բացահայտել ինչպես մշակված մեթոդական համալիրի կիրառման արդյունավետությունը հանրակրթական հաստատությունում, այնպես էլ մասնակից ուսանողների գիտագործնական կարողությունները:

Հետազոտության տեսական նշանակությունը:

Հետազոտության արդյունքում բացահայտված օրինաչափությունները, սովորողների լեզվազգացողությունը խթանող մեթոդների համալիրի կիրառման արդյունքների վերլուծությունը լրացնում են մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի բնագավառում առկա գիտելիքները, մասնավորապես՝ տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակի բարձրացման տեսական պատկերացումներն ու հիմնադրույթները:

Հետազոտության գործնական նշանակությունը:

1. Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել.

- բուհերում մանկավարժական կադրերի պատրաստման ու վերապատրաստման գործընթացում՝ ապահովելով. ա) տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակի աստիճանական բարձրացումը, բ) մանկավարժական պրակտիկայի արդյունավետությունը,
- հանրակրթական հաստատություններում՝ նպաստելով սովորողների լեզվազգացողության, լեզվամտածողության և խոսքային կարողությունների զարգացմանը:

2. Մեր կողմից առաջարկվող մեթոդական համալիրը կարող է հիմնարար նյութ հանդիսանալ մանկավարժական բուհում հատուկ դասընթաց (սեմինար, ընտրովի առարկա) կազմակերպելու համար:
3. ԲԶԳ մեթոդի կիրառմամբ ստացված տվյալները կարող են ծառայել հայերենի զուգորդական նորմերի բառարան ստեղծելու համար:
4. Ստացված արդյունքները կարող են կիրառվել նաև լեզվաբանական, մանկավարժական, հոգեբանական, կրթադաստիարակչական, մեթոդական տարաբնույթ հետազոտություններում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Լեզվազգացողության պատշաճ մակարդակը, նրա շարունակական բարձրացումը ապագա ուսուցչի արդյունավետ մասնագիտական գործունեության կարևոր նախադրյալ է. այն ապահովում է արտահայտությունների իմաստային, ոճական, բառային, դարձվածային յուրահատկությունների արագ բացահայտում, խոսքային գործընթացի վերահսկում, ենթատեքստի արագ ընկալում՝ նպաստելով լեզվահաղորդակցական կոմպետենցիաների ձևավորմանն ու զարգացմանը:

2. Առաջարկվող մեթոդական համալիրի (լեզվազգացողության մակարդակի պարբերական որոշում, տարբերակված ուսուցման կազմակերպում, գիտելիքների ստուգում և գնահատում մշակված եղանակով, ուսանողների գործնական կարողությունների բացահայտում) կիրառումը հանգեցնում է տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակի շարունակական բարձրացմանը:

3. ԲԶԳ մեթոդը սովորողների զուգորդական-իմաստաբանական դաշտերի ուսումնա-սիրման, լեզվազգացողության մակարդակի որոշման և զարգացման շարժընթացի հետազոտման արդյունավետ միջոց է:

Հետազոտության փորձարարական բազան: Գիտափորձերն անցկացվեն են ՀՊՄՀ Սկզբնական կրթության, Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետներում, Երևանի Բ. Ժամկոչյանի անվան թիվ 119 դպրոցում:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունն իրականացվել է. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստերում (2011-2017), ՀՊՄՀ գիտաժողովներում (2007, 2010), ՀՊՄՀ Կիրառական հոգեբանության ամբիոնի սեմինարում (2014), II միջազգային գիտատեսական գիտաժողովում՝ «Արդի գիտական հետազոտությունները ժամանակակից աշխարհում» (Ուկրաինա, 2015):

Աշխատանքի ծավալն ու կառուցվածքը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից: Այն պարունակում է 13 աղյուսակ, 8 նկար և 1 տրամագիր: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 143 համակարգչային էջ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, աշխատանքային վարկածը, խնդիրները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:



Նկար 1. Ուսանողների լեզվազգացողության զարգացման գործընթացի կառուցվածքը:

Առաջին՝ *«Լեզվազգացողության հիմնախնդիրները»* գլխում քննվել են լեզվի և մտածողության, լեզվի և հաղորդակցության, խոսքի և մտածողության փոխառնչությունները՝ հիմք ընդունելով ժամանակակից գիտական գրականության մեջ հաճախակի արծածվող այն թեզը, որ *լեզվազգացողությունը լեզվամտածողության* հատուկ, ներզգացողական մեխանիզմ է: Այն պայմանավորված է յուրահատուկ ընդհանրացումների տարբեր տեսակներով, որոնք իրականացվում են անկախ քերականական հասկացությունների և հարաբերությունների իմացության մակարդակից: Դիտարկվել են լեզվազգացողության վերաբերյալ գիտական գրականության մեջ գոյություն ունեցող մանկավարժամեթոդական, լեզվաբանական, հոգելեզվաբանական, լեզվափիլիսոփայական մոտեցումները: Դրանց համեմատական վերլուծության միջոցով վեր է հանվել լեզվազգացողության էությունը՝ սահմանելով այն որպես գիտակցական-տրամաբանականի և ենթագիտակցական-ներզգացողականի տարրերով միահյուսված ու լեզվագործածության ընթացքում դրսևորվող գործընթաց, որն ապահովում է անհատի հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորումը և խթանում դրա շարունակական զարգացումը: Լեզվազգացողության ձևավորման ու զարգացման մեթոդական համալիրը մշակվել է *գիտականության, մատչելիության, գիտակցականության, մասնագիտական ուղղվածության* սկզբունքների հենքի վրա: Ելնելով դիտարկվող խնդրի նպատակից՝ կարևորվել են հատկապես *մասնագիտական ուղղվածության և հաղորդակցականության* սկզբունքները, քանի որ վերջիններիս հենքի վրա կազմակերպվող ուսուցումը խթանում է բառային միավորների գրագետ կիրառման կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Երկրորդ՝ «*Տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության զարգացման միջոցները*» գլխում քննվել են ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակի ուղղորդված բարձրացման միջոցները՝ խոսք կառուցելու կարողությունների ձևավորման գործընթացում կարևորելով գրական լեզվի արտահայտչամիջոցների, մանրապատում ստեղծագործությունների, արևմտահայ գրական տեքստերի կիրառումը, օտար լեզուներից թարգմանական աշխատանքների կատարումը:

Սովորողների լեզվազգացողության մակարդակի բարձրացմանն ուղղված ուսումնական տեքստեր կազմելիս առաջնորդվել ենք հետևյալ քայլերով. նախ ներկայացրել ենք համապատասխան օրինակներ, որպեսզի ուսանողը գործնականում տիրապետի տվյալ պատկերավորման միջոցին, այնուհետև ընտրել ենք համալիր ուսումնական տեքստեր (այդ թվում՝ հատվածներ դասական գրականությունից, մանկագրությունից և այլն)՝ պատկերավորման միջոցների նշված խմբին տիրապետելու կարողությունների զարգացման համար:

Ապագա ուսուցչի բառապաշարը հարստացնելու նպատակով առաջարկվել են տրամաբանորեն փոխկապակցված ուսումնական տեքստեր, որոնք ապահովում են ուսուցչի մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ բառապաշարի հենքային մակարդակը: Առաջարկված ուսումնական տեքստերն ուսանողին անուղղակիորեն հուշում են բառերի ու բառաձևերի, գեղարվեստական պատկերավորման միջոցների կիրառման նրբությունները տարբեր համատեքստերում և խոսքային տարբեր իրավիճակներում: Ներկայացվել են նաև թեստային առաջադրանքների

նմուշօրինակներ, որոնք ուղղված են բառիմաստների ընկալման, յուրացման ու կիրառման մակարդակի ստուգմանը:

Քննարկվել են նաև հանրաճանաչ մանկական երգերը՝ որպես տարրական դասարանների ապագա ուսուցչի, իսկ նրա միջոցով՝ նաև աշակերտի լեզվազգացողության զարգացման արդյունավետ միջոց: Հիմնավորվել է, որ մանկական շարժանկարներից ընտրված հայտնի երգերը, ներգործելով սովորողի հուզաշխարհի վրա, նպաստում են պատկերավոր արտահայտությունների և լեզվի արտահայտչամիջոցների ընկալմանը և յուրացմանը:

Առաջարկվող ուսումնական նյութերը փորձարկվել են ՀՊՄՀ սզբնական կրթության ֆակուլտետի (ԲԿԾ) առկա և հեռակա ուսուցման տարբեր կուրսերում գործնական պարապմունքների ընթացքում: Գրավոր և բանավոր հարցումների արդյունքները ցույց են տվել, որ դրանք էապես նպաստում են լեզվի արտահայտչամիջոցների մասին ուսանողների տեսական գիտելիքների ամրապնդմանը, նրանց լեզվազգացողության մակարդակի բարձրացմանը, արդյունքում՝ բառագործածության հմտությունների զարգացմանն ու ընթերցողական ճաշակի ձևավորմանը:

Նշված գլխում դիտարկվել է օտարալեզու գրական տեքստերից թարգմանական աշխատանքների կատարման դերը ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակի բարձրացման գործում, հիմնավորվել է, որ դրանք նպաստում են սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը, ձևավորում ճանաչողական հետաքրքրություններ ոչ միայն մայրենի, այլև օտար լեզուների հանդեպ:

Բնագիր տեքստը ճշգրիտ ըմբռնելու և մայրենի լեզվով ներկայացնելու հմտություններ զարգացնելու, ինչպես նաև մասնագիտական ոլորտում գոյություն ունեցող գիտական, գիտամեթոդական նորություններին հաղորդակցվելու նպատակով ուսանողներին հանձնարարվել է փոքրածավալ թարգմանություններ կատարել ինչպես գեղարվեստական, այնպես էլ մասնագիտական գրականությունից: Ապացուցվել է, որ թարգմանելու ընթացքում բառերի, արտահայտությունների, քերականական կառույցների համեմատական վերլուծությունը զարգացնում է սովորողի լեզվազգացողությունը՝ նպաստելով նրա խոսքի մշակույթի զարգացմանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանը, մայրենի լեզվի հարստության գիտակցմանը:

Քննվել է սովորողների լեզվազգացողության զարգացման կարևորությունը նաև արևմտահայ գրական տեքստերի միջոցով: Դ. Վարուժանի «*Ծաղկեփունջ*» ժողովածուից ընտրված օրինակներով ցույց է տրվել, որ չնայած արևմտահայերենում գոյություն ունեն մեզ համար անհասկանալի բառեր, արևելահայերենից տարբեր բառաձևեր (օրինակ՝ *գեղո - գեղեցկության, ողջույն ընդ քեզ - ողջույն, արթընցած - արթնացած*), սակայն բառիմաստներն առավել դյուրին են ընկալվում, եթե ուսումնական գործընթացում կիրառվում են արևմտահայ մանկագիրների ստեղծագործությունների նմուշներ: Ուսանողներին հանձնարարվել է առաջարկվող բնագրից դուրս բերել բառաձևեր, կազմել դրանց համարժեքներն արևելահայերենում, ցույց տալ գրության, արտասանության, իմաստային ու նրբիմաստային տարբերություն-ները:

Ապացուցել ենք, որ նմանատիպ առաջադրանքների կիրառումն արդյունավետ է նաև տարրական դպրոցում (արտադասարանային միջոցառումների, վիկտորինա-

ների ժամանակ), ինչը պարարտ հող կստեղծի արևմտահայ գրականությունը բարձր դասարաններում առանց դժվարության ընկալելու համար:

Երրորդ՝ *«Ուսանողների լեզվազգացողության մակարդակի բացահայտումը. զարգացման շարժընթացի փորձարարական հետազոտում»* գլխում դիտարկվել է ԲԶԳ մեթոդը՝ որպես ուսանողի լեզվազգացողության մակարդակի շարժընթացի ուսումնասիրման արդյունավետ գործիք:

Առաջին ենթագլխում նկարագրվել է ԲԶԳ մեթոդն իր տարատեսակներով՝ ազատ, ուղղորդված, միա- և բազմափուլ: Քննարկվել են ձևաբանական (*պարադիգմատիկ*) և շարահյուսական (*սինտագմատիկ*) զուգորդությունները, դրանց տեսակները: Պարզաբանվել են բառային զուգորդությունների տեսության կարևոր հասկացությունները՝ *բառ-խթան, հակազդում, իմաստաբանական դաշտ, զուգորդական դաշտ* և այլն, որոնք հաջորդիվ կիրառվել են ուսանողների լեզվազգացողության մակարդակի բարձրացման ու զարգացման մեխանիզմների ուսումնասիրման ընթացքում:

Երկրորդ ենթագլխում դիտարկվել է ԲԶԳ մեթոդը՝ որպես լեզվազգացողության մակարդակի բացահայտման գործիք: Ներկայացվել են սովորողների լեզվազգացողության մակարդակի և դրա բարձրացման շարժընթացի որոշման՝ մեր կողմից իրականացված հետազոտությունները և դրանց արդյունքում ստացված փորձարարական տվյալները: Առաջարկվել է լեզվազգացողության մակարդակի և դրա շարժընթացի գնահատման եղանակ, որն իրականացվել է մի քանի փուլով:

Առաջին փուլում ԲԶԳ մեթոդով ուսումնասիրվել են ուսանողների զուգորդական դաշտերը, բացահայտվել դրանց հատումները: Գիտափորձին մասնակցել է 2-րդ և 3-րդ կուրսերի 64 ուսանող: *Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարանից* ընտրված 200 ամենահաճախադեպ բառեր (100 գոյական, 60 բայ և 40 ածական)՝ որպես բառ-խթաններ, թելադրվել են ուսանողներին՝ առաջարկելով դրանց հակազդել միտքն եկած առաջին բառով: Ստացված հակազդումները վերլուծվել են՝ հիմք ընդունելով *Վուդվորտսի քերականական կարգերի բաշխումը*: Գոյական (N), բայ (V) և ածական (A) բառ-խթանների հակազդումները դասակարգվել են ըստ N, V և A քերականական կարգերի, ինչպես նաև նախադասությունների (*ն.*) և բառակապակցությունների (*բկ*) (աղ.1): Բոլոր դեպքերում հակազդումներում գերիշխում են ձևաբանական զուգորդությունները (N→N, V→V)՝ բացառությամբ A բառ-խթանների, որոնց հակազդումների 42%-ը գոյականներ են՝ A→N: Նկատենք, որ N→N, V→V զուգորդությունների բաշխումն անհամաչափ է. V→N զուգորդությունները կազմում են 12.2%, մինչ N→V զուգորդությունները՝ 3% (աղ.1): Հարկ է նշել, որ բերված տվյալները հիմնականում համընկնում են Դ.Ս. Պալերմոյի տվյալներին, համաձայն որոնց՝ *N-խթանները* 77% դեպքում առաջացնում են ձևաբանական, իսկ *V-խթանները* 58% դեպքում՝ շարահյուսական զուգորդություններ:

Աղյ. 1. Զուգորդությունների դասակարգումն ըստ քերականական կարգերի

Մասնագիտություն	Բառ-խթան՝ N				Բառ-խթան՝ V				Բառ-խթան՝ A			
	N	A	V	ն. (բկ)	N	A	V	ն. (բկ)	N	A	V	ն. (բկ)
Մաթեմատիկա	78.4	6.7	3.0	0.5 (10.3)	-	–	–	–	–	–	–	–
Սուրդոմանկա-վարժություն, %	54.8	18.2	2.4	5.5 (16.5)	12.2	3.7	18.8	42 (24)	42.0	13.3	3.8	22.2 (18)

Որակական համընկնում է նկատվում նաև մեր և Վուդվորտսի կողմից ստացված տվյալների միջև. N→N՝ 70%, N→V՝ 8%, N→A՝ 20%, V→N՝ 50%, A → N՝ 45%:

Հետազոտությունների *երկրորդ փուլում* ԲՀԳ մեթոդով ուսումնասիրվել է տարրական դասարանների ապագա ուսուցչի արժեհամակարգի ձևավորման համար կարևոր հայտանիշներից մեկի՝ քաղաքացիականության (civicism) մակարդակի փոփոխման շարժընթացը լեզվազգացողության և լեզվամտածողության համատեքստում: Գիտափորձերին մասնակցել են հեռակա ուսուցման նույն ուսանողները 1-ին և 4-րդ կուրսերում: Որպես ուսումնասիրության օբյեկտ ընտրվել են *քաղաքացիականությունը* բնութագրող հինգ հայտանիշներ և հնգական բառ-խթաններ՝ դրանցից յուրաքանչյուրի դրսևորման չափը պարզելու համար (Նկ.2):



Նկ.2. Բառ-խթաններ:

Բոլոր հինգ հայտանիշների համար ստացված տվյալները ենթարկվել են մաթեմատիկական մշակման, կազմվել են համապատասխան աղյուսակներ և կառուցվել գծապատկերներ: Որպես օրինակ, ստորև բերված են *հայրենասիրություն* հայտանիշի վերլուծության արդյունքները (աղ.2) և գծապատկերը (նկ.3) :

Ընդունելով, որ վերոնշյալ հինգ հայտանիշները հավասար ներդրում ունեն ուսանողի քաղաքացիականության մակարդակի ձևավորման գործընթացում, հաշվարկվել են համապատասխան քանակական բնութագրերը, որոշվել է քաղաքացիականության մակարդակի շարժընթացը լեզվազգացողության համատեքստում (նկ.4):

Աղ. 2 *Հայրենասիրություն* հայտանիշի վերլուծության արդյունքները

Արձա-գանքների գնահա-տական	Կուրս	Տարիքային խմբեր					R_α	S_α^2
		j = 1 16-20 (21-25)	j = 2 21-25 (26-30)	j = 3 26-30 (31-35)	j = 4 31-35 (36-40)	j = 5 36-45 (41-50)		
$\overline{P}_{\alpha,j}$,α = 1*	1-ին	0.268	0.625	0.125	0.313	0.050	0.276	0.039
	4-րդ	0.342	0.536	0.750	0.364	0.250	0.448	0.031
$\overline{P}_{\alpha,j}$,α = 2	1-ին	0.307	0.413	0.413	0.719	0.275	0.425	0.025
	4-րդ	0.211	0.446	0.453	0.602	1.000	0.542	0.068
$\overline{P}_{\alpha,j}$, α = 3	1-ին	0.526	0.500	0.488	0.531	0.400	0.489	0.002
	4-րդ	0.408	0.554	0.750	0.534	0.656	0.580	0.013
$\overline{P}_{\alpha,j}$, α = 4	1-ին	0.516	0.588	0.525	0.531	0.450	0.522	0.002
	4-րդ	0.789	0.857	0.594	0.511	0.719	0.694	0.016
$\overline{P}_{\alpha,j}$, α = 5	1-ին	0.284	0.400	0.550	0.563	0.425	0.444	0.011
	4-րդ	0.461	0.554	0.531	0.591	0.406	0.509	0.004
R_j	1-ին	0.380	0.505	0.420	0.531	0.320	0.431	0.006
	4-րդ	0.442	0.589	0.616	0.520	0.606	0.555	0.004

*α = 1՝ անամպ երկինք, α = 2՝ մարտական շքանշան, α=3՝ Եռաբլուր, α =4՝ ֆիդայի, α =5՝ անմահություն, $\overline{P}_{\alpha j}$ –բառ-խթանի միջին գնահատականը, R_j – հայտանիշը բնութագրող գործակիցը, R_α – բառ-խթանի միջին գնահատականն ըստ կուրսերի, S_α^2– բառ-խթանի գնահատականի միջին քառակուսային շեղումը:



Նկ. 3.



Նկ. 4

Երրորդ ենթագլխում ներկայացվում է առաջադրանքների համախումբ՝ բաղկացած որոշակի հաջորդական քայլերից: Սովորողների լեզվազգացողության մակարդակը բարձրացնելու և ստուգումն ավելի դյուրին դարձնելու համար առաջադրանքները դասակարգվել են ըստ բարդության աստիճանների՝ պարզ, միջին բարդության և բարդ: Այսպիսի տրոհում կատարվել է՝ հիմք ընդունելով

ընտրված բառերի (գրաբարյան, նորաստեղծ, փոխառյալ և այլն) գործածման հաճախականությունը: Ուսանողների լեզվազգացողության մակարդակի բարձրացումն իրականացվել է համալիր ուսումնական տեքստերի միջոցով, դրա զարգացման շարժընթացի ուսումնասիրումն ու գնահատումը՝ ԲԶԳ մեթոդով, փորձարարական տվյալների վերլուծությունը՝ մաթեմատիկական վիճակագրության մեթոդներով, *Mathematica* ծրագրային փաթեթի միջոցով: Լեզվազգացողության մակարդակի բարձրացման մեթոդները մշակվել են հետևյալ հաջորդական քայլերով՝ 1) բառիմաստի ընկալման մակարդակի բարձրացում և գնահատում, 2) բառապաշարի հարստացում և գնահատում, 3) ասույթների, առած–ասացվածքների պաշարի հարստացում և գնահատում, 4) ոճական հմտությունների զարգացում և գնահատում: Տվյալների վերլուծության արդյունքները վկայում են, որ սեփական խոսքում լեզվական այս կամ այն միավորի կիրառման կարողությունների զարգացումն ու ձևավորումը պայմանավորված են հետևյալ գործոններով՝ *հարուստ բառապաշարի առկայություն, տարբեր իրավիճակներում դրանից օգտվելու կարողություն և կիրառման անձնական փորձ:*

Չորրորդ ենթագլուխը նվիրված է ապագա ուսուցչի լեզվազգացողության զարգացմանն ուղղված մեթոդների մշակմանն ու դրանց կիրառման արդյունավետության որոշմանը՝ հիմք ընդունելով ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետի *տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա* մասնագիտության առկա ուսուցման 3-րդ կուրսում իրականացված փորձարկման արդյունքները, ինչպես նաև նույն ուսանողների կողմից մանկավարժական պրակտիկայի ընթացքում իրականացված փորձարկումների վերջնարդյունքները: Տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության զարգացմանն ուղղված մեթոդների կիրառումը նախագծվել և իրականացվել է եռաստիճան գծապատկերով՝ *անցնել գործընթացի միջով՝ որպես սովորող, իմաստավորել այն սեփական փորձով՝ որպես ապագա ուսուցիչ, և ապա, հաշվի առնելով սեփական փորձը, կիրառել կենդանի մանկավարժական գործընթացում՝ որպես գործող ուսուցիչ*: Առաջարկված մեթոդների փորձարկումը բուհում իրականացվել է չորս փուլով. 1) ուսանողների լեզվազգացողության նախնական մակարդակի որոշում ԲԶԳ մեթոդով, 2) լեզվազգացողության զարգացման մեթոդների համալիրի կիրառում, 3) գիտելիքների ստուգում տարբերակված թեստերով, 4) լեզվազգացողության մակարդակի կրկնակի որոշում ԲԶԳ մեթոդով:

Առաջին փուլում կատարված գիտափորձի արդյունքները ցույց են տվել, որ ուսումնասիրությանը մասնակից ուսանողների լեզվազգացողության մակարդակները խիստ տարբեր են (աղ.3), ուստի նպատակահարմար էր կիրառել շերտավորված ուսուցման եղանակը՝ ուսանողներին բաժանելով հինգ ենթախմբի, որոնցից յուրաքանչյուրում ընդգրկվել է լեզվազգացողության մոտավորապես նույն մակարդակն ունեցող 5-6 ուսանող:

Երկրորդ փուլում մեկամսյա գործնական պարապմունքների ընթացքում կիրառվել են ուսանողների լեզվազգացողության զարգացմանն ուղղված՝ մեր կողմից մշակված և ըստ բարդության աստիճանի (պարզ, միջին և բարդ) տարբերակված ուսումնական նյութերը:

Երրորդ փուլում խմբային աշխատանքի միջոցով իրականացվել է տարբերակված թեստերով գիտելիքների ստուգում: Ըստ որում, աշխատանքի 10-միավորանոց համակարգով գնահատման գործընթացին դասախոսի հետ մեկտեղ մասնակցել են նաև ուսանողները, ովքեր գնահատել են ինչպես իրենց (ինքնագնահատում), այնպես էլ մյուս խմբերի աշխատանքները: Վերջնական գնահատականը ձևավորվել է երեք բաղադրիչից՝ դասախոսի գնահատական (1-4), ինքնագնահատական (1-2), այլ խմբերի կողմից տրված (1-3) միավորների միջին արժեք: Նշենք, որ ինքնագնահատումը կատարվել է աշխատանքային թերթիկի վրա և հանձնվել դասախոսին նախքան կատարած աշխատանքը բանավոր ներկայացնելը: Այլ խմբերի գնահատումը կատարվել է խմբերի աշխատանքների ներկայացումից հետո առանձին, նախապես բաժանված ձևաթերթիկների վրա: Վերջնական գնահատականները հաշվարկվել են և բարձրաձայնվել լսարանում: Կիրառվող մեթոդական համալիրի արդյունավետությունը որոշելու նպատակով հաշվարկվել է խմբի *վարկանշային գործակիցը* $\delta = \left(M\xi - \sqrt{D\xi}\right)/100$, որտեղ $M\xi = \frac{1}{N}\sum_{i=1}^{N} x_i$–ը և $D\xi = \frac{1}{N}\sum_{i=1}^{N} x_i^2 - (M\xi)^2$–ը, համապատասխանաբար, ξ պատահական մեծության մաթեմատիկական սպա-սումն է և դիսպերսիան, իսկ $(x_1, x_2, \cdots x_N)$-ը՝ խմբում ընդգրկված սովորողների՝ ԲԶԳ-ի արդյունքում ստացած միավորները (N–ը ուսանողների թվաքանակն է խմբում): Այնուհետև հաշվարկվել է խմբի *վարկանշային գնահատականը*՝ որպես խմբի վերջնական գնահատականի և *վարկանշային գործակցի* արտադրյալ:

Չորրորդ փուլում իրականացվել է ուսանողների լեզվազգացողության մակարդակի կրկնակի դիտարկում ԲԶԳ մեթոդով, որոշվել են նոր վարկանշային գործակիցները, ինչն էլ թույլ է տվել եզրահանգումներ կատարել կիրառվող մեթոդների արդյունավետության մասին: Աղյ.3-ի տվյալները ցույց են տալիս, որ մեկամսյա պարապմունքների արդյունքում ուսանողների լեզվազգացողության մակարդակը և խմբերի վարկանշային գործակիցներն աճել են, ինչը ևս վկայում է առաջարկվող մեթոդների արդյունավետության մասին: Ըստ որում, նախնական ցածր վարկանշային գործակից ունեցող խմբում ներգրավված ուսանողների լեզվազգացողության մակարդակն առավել բուռն է աճել: Այս հանգամանքը մեզ հիմք տվեց եզրակացնելու, որ առաջարկվող մեթոդների շարունակական կիրառումը (ամեն անգամ կազմավորելով ուսանողների նոր խմբեր՝ առաջնորդվելով նախորդ փուլի վերջում կատարված ԲԶԳ-ի արդյունքներով) կհանգեցնի ուսանողների լեզվազգացողության անընդհատ զարգացման՝ դրանց մակարդակները խտացնելով ինչ-որ նիշի շուրջ, որը, պայմանավորված է դասավանդողի լեզվազգացողության մակարդակով:

Առաջարկվող մեթոդների արդյունավետության մասին ավելի հավաստի տեղեկություններ ստանալու նպատակով կատարվել է ևս մեկ քայլ՝ պարզելու համար, թե կարող է արդյոք մշակված մեթոդներով նախապատրաստված ուսանողը, տեղայնացնելով այդ նույն մեթոդները, արդեն որպես ուսուցիչ կիրառել դրանք տարրական դպրոցում: Փորձարկումն իրականացվել է մանկավարժական պրակտիկայի ընթացքում Երևանի Բ. Ժամկոչյանի անվան թիվ 119 դպրոցի երրորդ դասարաններում:

Աղյ. 3 Ուսանողների լեզվազգացողության մակարդակի փոփոխման շարժընթացը

Ուսանողների №	I ԲԶԳ		Գնահատման մեթոդիկա				Վարկանիշային Գնահատ.	II ԲԶԳ		Փոփոխությունը	
	Գնահատ.	Խմբի վարկանիշ	Ինքնա գնահ.	Այլ խմբերի գնահատ.	Դասախոսի գնահատ.	Վերջնական գնահատ.		Գնահատ.	Խմբի վարկանիշ	Անհատական	Խմբային
1	20	0.24	1	1223 2	4	7	1.7	28	0.32	8	0.08
2	22							33		11	
3	32							37		5	
4	38							42		4	
5	39							43		4	
6	39							43		4	
7	42	0.43	1	3213 2.25	4	7.25	3.1	45	0.46	3	0.03
8	44							47		3	
9	44							47		3	
10	46							49		3	
11	47							52		5	
12	51	0.52	2	2323 2.5	5	9.5	4.9	55	0.56	4	0.04
13	53							57		4	
14	55							58		3	
15	55							59		4	
16	56							59		3	
17	58							62		4	
18	63	0.65	2	3323 2.75	5	9.75	5.8	67	0.69	4	0.04
19	66							71		5	
20	69							74		5	
21	70							76		6	
22	73							76		3	
23	77	0.76	1	3323 2.75	5	8.75	6.65	82	0.83	5	0.07
24	78							85		7	
25	78							85		7	
26	82							88		6	
27	88							92		4	

Որոշվել է աշակերտների լեզվազգացողության նախնական մակարդակը, կատարվել ԲԶԳ-ի արդյունքների քանակական վերլուծություն, ինչի հիման վրա

յուրաքանչյուր դասարանում աշակերտները բաժանվել են խմբերի, և որոշվել են դրանց նախնական վարկանշային գործակիցները: Վեցշաբաթյա ակտիվ պրակտիկայի ընթացքում ուսանողներն անցկացրել են խմբային աշխատանքներ՝ կիրառելով *լեզվապրամաբանական, իմաստաբանական, քերականական* տարբերակված առաջադրանքներ (պարզ, միջին բարդության և բարդ): Ընդ որում, պարզ, միջին բարդության և բարդ առաջադրանքները կիրառվել են համապատասխան վարկանշային գործակիցներ ունեցող խմբերում:

Աշակերտների լեզվազգացողության մակարդակի շարժընթացը բացահայտելու նպատակով իրականացվեց երկրորդ ԲԶԳ-ն:

1-ին և 2-րդ ԲԶԳ-ի արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ մի կողմից՝ աճել են միևնույն դասարանի խմբերի վարկանշային գործակիցները, մյուս կողմից՝ նվազել է դրանց միջև եղած տարբերությունը (նկ.5): Սա թույլ է տալիս արձանագրել յուրաքանչյուր աշակերտի լեզվազգացողության մակարդակի դրական շարժընթաց:



Նկ. 5 Վարկանշային գործակիցների փոփոխման տրամագիր
Ա) առաջին գիտափորձ, Բ) երկրորդ գիտափորձ

Հարկ է նշել նաև, որ երկրորդ ԲԶԳ-ի տվյալների հիման վրա վերաձևավորվում են նոր աշխատանքային խմբեր՝ ստեղծելով նախադրյալներ առաջարկված մեթոդների համալիրի հաջորդ փուլի իրականացման համար:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ՝ 1) ուսանողների լեզվազգացողության մակարդակի բարձրացման մեթոդների համալիրի կիրառումը ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետում նպաստում է ուսանողների լեզվազգացողության զարգացմանը, նրա մակարդակի աստիճանական ուղղորդված բարձրացմանը, 2) ուսանողները յուրացրել և կենդանի մանկավարժական գործընթացում հաջողությամբ կիրառել են մշակված մեթոդների համալիրը տարրական դպրոցում, ինչի արդյունքում բարձրացել է նաև աշակերտների լեզվազգացողության մակարդակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայրենական և արտասահմանյան գիտամեթոդական գրականության մեջ թեև բացահայտված են լեզվազգացողության տեսական հիմքերը, հիմնական դրսևորումները, նրա մակարդակի բարձրացման մեխանիզմները, սակայն այդ խնդիրները չեն քննվում ապագա ուսուցչի պատրաստման գործընթացի համատեքստում: Այնինչ տարրական դասարանների ապագա ուսուցչի աշխարհընկալումը, արժեհամակարգի ձևավորումը, հաղորդակցական կոմպետենցիաները և ստեղծագործական կարողությունները մեծապես պայմանավորված են նրա լեզվազգացողության մակարդակով:
2. Բառային զուգորդությունների գիտափորձի մեթոդը ուսանողների լեզվազգացողության հետազոտման արդյունավետ գործիք է, որի կիրառումը հնարավորություն է ընձեռում լեզվազգացողությունը դարձնել չափելի: Մասնավորաբար, այն թույլ է տալիս՝
- որոշել տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակը,
- հետազոտման ընթացքում կիրառել քանակական վերլուծության մեթոդներ՝ որոշելու համար տարրական դասարանների ապագա ուսուցչի լեզվազգացողության մակարդակի քանակական բնութագրերը, հետազոտելու նրա լեզվազգացողության զարգացման շարժընթացը:
3. Մեր կողմից մշակված և փորձարկված մեթոդների համալիրի կիրառումը տարրական դասարանների ապագա ուսուցչի պատրաստման գործընթացում խթանում է նրա լեզվազգացողության մակարդակի աստիճանական բարձրացումը:
4. Մանկավարժական պրակտիկայի արդյունքները վկայում են, որ ուսումնառու-թյան ընթացքում լեզվազգացողության ձևավորման մեթոդական համալիրի միջո-ցով ուսանողների ձեռք բերած կարողություններն արդյունավետորեն կիրառելի են տարրական դպրոցում, եթե հաշվի են առնվում տարրական դպրոցի մայրենիի առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը:
5. Բառային զուգորդությունների գիտափորձի ընթացքում ձեռք բերած տեղեկույթը և արդյունքում ստացված տվյալները կարող են հիմնարար նյութ հանդիսանալ հայերենի զուգորդական նորմերի բառարան ստեղծելու համար:
6. Մեր երկարամյա ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ձևավոր-ված եզրակացություններն անառարկելի և վերջնական չեն: Մանկավարժական և լեզվաբանական գիտությունների զարգացման շարժընթացը մեզ հնարավորություն կընձեռի հետագայում ևս դրանք գիտական նոր տեսանկյուններով վերանայելու:

Ատենախոսության արդյունքները զետեղված են մեր կողմից հրատարակած 8 գիտական հոդվածներում և 3 գիտաժողովների նյութերի ժողովածուներում.

1. **Աղաբաբյան Կ.Հ., Սարգսյան Ա.Վ.,** Արևմտահայերենի ծրագրային ուսուցման առանձնահատկությունները դպրոցական դասընթացում, ՄԳԱ, գիտական հոդվածաշար, Եր., 2004, հ.3, էջ 120 – 124:
2. **Աղաբաբյան Կ.Հ.,** Միջակետի գործածությունը, Հայոց լեզու և գրականություն, 2005, 1-2, էջ 126 - 127:
3. **Աղաբաբյան Կ.Հ.**, **Սարգսյան Ա.Վ.**, Լեզվական հենքային գործիմացությունների ձևավորումը զուգորդությունների կիրառման միջոցով (լեզուների ուսուցման գործընթացում), Միջ. գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 163 -167:
4. **Աղաբաբյան Կ.Հ.,** Դերբայական դարձվածով արտահայտված երկրորդական անդամների տրոհումը, ՀՊՄՀ գիտական տեղեկագիր, 2008, Հ.3-4, էջ 11-14:
5. **Աղաբաբյան Կ.Հ.,** Սովորողների լեզվական մտածողության հետազոտումը ազատ զուգորդությունների գիտափորձի մեթոդով, Խ. Աբովյանի ծննդյան 90- ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2010, էջ 266-268:
6. **Աղաբաբյան Կ. Հ.,** Լեզվական մտածողության զարգացման ընթացքի ուսումնասիրումը, ՀՊՄՀ գիտական տեղեկագիր, 2011, N 2-3, էջ 218-223:
7. **Ջիջյան Ռ.Զ., Աղաբաբյան Կ.Հ.**, Ուսանողների լեզվազգացողության զարգացման խնդիրները արդի պայմաններում, ՀՊՄՀ, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Երևան, Զանգակ, 2013, 1, էջ 161-171:
8. **Վարդումյան Ս.Տ., Աղաբաբյան Կ.Հ.**, Տարրական դպրոցի ապագա ուսուցչի լեզվազգացողության հետազոտման տեխնոլոգիաները, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Երևան, Զանգակ, 2013, 3, էջ 81-85:
9. **Агабабян К. А.,** Определение динамики развития чувства языка учащихся вузов методом ассоциативного эксперимента, Труды II Межд. научно-практической конференции *Актуальные научные исследования в современном мире,* Переяслав-Хмельницкий, Украина, 2015, с.19-24
10. **Aghababyan K. H.** Investigation of Dynamics of Students' Sense of Language by Word Associative Experiment Method, Humanities in the 21st century: science problems and searching for effective humanist technologies, Pedagogical sciences, 2016, San Francisco, USA, p. 55-62.
11. **Aghababyan K. H.** Investigation of Dynamics of Students' Civicism Formation by Word Associative Experiment Method, Journal New University, Topical issues of humanities and social sciences, UK, 2017, № 1-2, p. 12-19

АГАБАБЯН КАРИНЕ АКОПОВНА

МЕТОДЫ РАЗВИТИЯ ЧУВСТВА ЯЗЫКА СТУДЕНТОВ В ПЕДАГОГИЧЕСКИХ ВУЗАХ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата педагогиюеских наук по специальности 00.02- «Методика преподавания и воспитания» (армянский язык). Защита диссертации состоится 25 апреля 2018 г. в 12^{00} на заседании специализированного совета 020 ВАК по присвоению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тигран Меци 17

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Одной из важнейших стратегических целей рефор-мы образования, осуществляемой в нашей стране, является подготовка разносторон-не развитых специалистов, постоянно стремящихся к самосовершенствованию и способных быстро ориентироваться в условиях меняющихся реалей нашего мира. Это предполагает первоочередное решение ряда задач учебно-воспитательного процесса, одной из которых является выработка методов обучения, обеспечивающих непрерывное развитие чувства языка учащихся, что стимулирует развитие творчес-кого мышления, приобретение теоретических знаний и их применение на практике.

Находясь в постоянном контакте с учениками, учитель должен в совершенстве владеть родным языком, грамотно и аргументированно излагать мысли, уметь силой красноречия увлечь аудиторию, привить любовь к родному языку и стремление к познанию оттенков письменной и устной речи. Становление этих навыков у будущих учителей возможно через развитие чувства языка. Однако должного внимания проблемам чувства языка армянскими исследователями не оказано, и детальные исследования чувства языка в армянской научной мысли отсутствуют.

Диссертация посвящена разработке комплекса методов перманентного развития чувства языка будущих учителей начальных классов в процессе их обучения.

Цель исследования: разработка и внедрение в учебном процессе комплекса методов, направленных на непрерывный рост уровня чувства языка и стимулирующих развитие коммуникативных компетенций будущего учителя.

Задачи исследования:

1. Анализ представленных в отечественной и зарубежной научно-методической литературе теоретических основ чувства языка, его основных проявлений и механизмов развития в процессе обучения родному языку;
2. Разработать и применить метод определения уровня чувства языка будущих учителей начальных классов методом словесного ассоциативного эксперимента;
3. Разработать комплекс методов, направленных на становление и развитие чувства языка будущих учителей начальных классов;
4. Применить разработанный комплекс методов в процессе педагогической практики будущих учителей начальных классов с учетом стандартов программы родного языка и учебных планов начальной школы.

5. Подытожить результаты экспериментальных исследований, выработав научно-теоретические основы дальнейшей работы и сформулировать методические указания.

Научная новизна исследования:

- Впервые в армянской действительности применен метод *словесного ассоциативного эксперимента* для определения уровня чувства языка будущих учителей начальных классов;
- Разработан, апробирован и внедрен в учебно-воспитательный процесс комплекс методов, обеспечивающих поэтапный рост уровня развития чувства языка учащихся как выших учебных, так и общеобразовательных заведений.
- разработанный комплекс методов развития чувства языка апробирован в начальной школе при непосредственном участии студентов педагогического университета в течении педагогической практики, что позволило на практике одновременно выявить эффективность примененных методов и научно-практические навыки студентов.

Теоретическая значимость исследования. Анализ результатов применения комплекса методов, способствующих развитию чувства языка, дополняет существующие теоретические концепции методики преподавания армянского языка, в частности, теоретические представления формирования чувства языка будущего учителя.

Практическая значимость исследования

1. Предложенный комплекс методов может быть применен:

- в вузах при подготовке и переподготовке педагогических кадров, обеспечивая: а) пошаговое повышение уровня чувства языка студентов, б) повышение эффективности педагогической практики;
- в общеобразовательных учреждениях, что будет способствовать развитию чувства языка, языкового мышления и коммуникативных компетенций учащихся.

2. Предложенный комплекс методов развития чувства языка могут лечь в основу разработки спецкурса (предметов по выбору) для студентов педагогических вузов.
3. Данные, полученные на основе метода *словесного ассоциативного эксперимента*, могут служить базовым материалом для создания словаря ассоциативных норм армянского языка.
4. Полученные данные могут быть использованы в педагогических, лигвистических, психологических исследованиях.

Экспериментальная база исследований:

- факультет начального образования АГПУ,
- факультет математики, физики и информатики АГПУ,
- средняя школа № 119 имени Б. Жамкочяна, г. Ереван.

Содержание и объем работы. Диссертация состоит из введения, трех глав, заключения и библиографии. Она содержит 13 таблиц, 8 рисунков и 1 диаграмму. Общий объем составляет 143 компютерных страниц. Основные результаты исследований опубликованы в 8 научных статьях и в 3 сборниках трудов научных конференций.

KARINE H. AGHABABYAN

METHODS OF DEVELOPMENT OF STUDENTS' LANGUAGE SENSE IN PEDAGOGICAL HIGHER EDUCATIONAL INSTITUTIONS

Thesis submitted for the Degree of Candidate of Pedagogical Sciences,
Specialty Field: 00.02 "Teaching and Education Methodology".
The thesis defence will be held on April 25, 2018 at 12^{00} at the session of
Specialized Council 00.02 of Higher Attestation Commission,
Khachatur Abovian Armenian State Pedagogical University
Address: 0010, Tigran Mets ave., 17, Yerevan

SUMMARY

The relevance of research

One of the main aims of educational reforms implemented in our country is to train multifaceted specialists heading for self-enhancement and agile in self-orientation under the changing circumstances of nowadays' reality. It assumes priority solutions to a series of significant tasks in educational processes, with special stress on the development and provision of respective conditions and teaching methodology aimed at persistent development of language sense (LS) among students which, in its turn, stimulates the development of students' both creative and analytical thinking, as well as, the respective skills of independent acquisition autonomous selfachievment of theoretical knowledge, and their practical application.

For a teacher – in constant contact with students – the advanced knowledge of native language is a fundamental basis, enabling to produce correct and argument based, eloquent speech enough to attract public attention, inspire fondness towards Mather tongue, and aspiration to uncover written and oral language overtones. The LS is crucial for the development of the above-mentioned skills among pre-service teachers.

The premises of consecutive research of the peculiarities of expression of LS were laid at the beginning of the 20th century, mainly, by European and American scholars. However it must be stated that pertinent studies of the subject matter have not been properly carried out in Armenia yet, and so far there are no detailed and multifarious investigation in this sphere.

The present thesis dwells on an intricate research of the process of development and progress of LS; set of methods (SM) boosting a permanent development of LS; respective grounding of their efficiency in the teaching / learning process.

The aim of the research is to develop and introduce a set of methods that are applied during the learning process. It aimed at the stepwise increase of the level of the language sense. Moreover, it aimed to stimulate and develop future teacher's communicative competence.

The tasks of the research are to:

1. Analyze scientific-methodological literature on theoretical basis of LS, the major expressions and the mechanisms of its development in the course of teaching.

2. Design and apply a method for determining the level of LS among primary school teacher/students via of verbal associative experiment (VAE) method.

3. Design SM for developing and forming the LS among school teachers and students.

4. Apply the designed SM in pedagogical practice in primary schools, taking into account the standards of the curricula of the primary school and the mother tongue.

5. Sum up the experimental results and develop the scientific and theoretical basis for further investigation and formulation of methodical guidelines.

The scientific novelty of the research

- For the first time in Armenian reality, the VAE method has been applied to determine the LS level among primary school teacher/students.
- The SM, that ensures a stepwise increase in the level of LS can be applied both in higher educational institutions and in general other educational institutions. It has been developed, tested and introduced to the teaching and educational process.
- The designed set of methods for developing the LS was tested in one of the primary schools with the direct participation of the students from the pedagogical university during their practicum. This allowed revealing both the effectiveness of the applied methods and students' scientific-practical skills.

The theoretical value of the research

The analysis of the results of the application of SM that promotes the development of the LS supplements the existing theoretical concepts of the methods of teaching Armenian language, in particular, theoretical basis for formation of the LS.

The practical value of the research:

1. The SM suggested might be applied in the following fields:

- In higher educational institutions and in teacher training programs, providing:

a) Stepwise increase of future teachers' students' level of SL, b) High-level efficiency of pedagogical internship.

- In public school sector for developing the sense of language, language thinking and communicative competence among school students.

2. The suggested set of methods for developing LS can form the basis for desining special course for pedagogical universities students.

3. The data collected on the basis of VAE might be useful source for compiling a dictionary of associative norms of the Armenian language.

4. The obtained data can be used in pedagogical, linguistic, and psychological research.

The experiment based research: the respective experiments have been conducted: in the faculty of Primary Education (ASPU), in the faculty of Mathematics, Physics and Informatics (ASPU), at Yerevan B. Zhamkochyan secondary school N119.

The content and the volume of the research: the thesis is compiled of Introduction, three chapters, Conclusions and Bibliography. It also includes 13 tables, 8 pictures and 1 histogram. The overall volume of the research consists of 143 computerized pages.

The main results of the research have been published in 8 scientific papers, and introduced at 3 scientific conferences.